ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » հուլիս 2022թ. № 119-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուռուտ գյուղի համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Ուռուտ գյուղի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1711-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-105-0601-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի ընդհանուր օգտագործության 0.005859 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
2. Հողամասի սահմանները որոշվում են «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և Լոռի Բերդ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2022թ. հուլիսի 26
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » հուլիսի 2022թ. № 120-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի վարչական սահմանում գտնվող 06-025-0011-0003 կադաստրային ծածկագրի 0.212171 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասում գտվող թիվ 2 շինության նկատմամբ այլ անձանց պատկանելու վերաբերյալ իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ գոյություն չունի և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ չի ընդգրկվել համայնքի սեփականության գույքի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի սեփականություն հանդիսացող շինության հետ կապված անճշտությունների ուղղման համար Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-025-0011-0003 կադաստրային ծածկագրի 0.212171 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողամասում գտվող 0.96 քմ արտաքին մակերեսով թիվ 2 շինության նկատմամբ ճանաչել համայնքային սեփականություն իրավունքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2022թ. հուլիսի 26
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » հուլիսի 2022թ. № 121-Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2022Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

որոշում եմ.

Տեղական ինքնակառավարման մարմինների 2022թ. սեպտեմբերի 25-ի կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Փոստի շենք՝ հասցեն գ. Ագարակ, փողոց 1, շենք 47
2) Ակումբի շենք՝ հասցեն գ. Ագարակ, փողոց 13, շենք 2
3) Կաթսայատան շենք՝ հասցեն գ. Բովաձոր, փողոց 1, շենք 26
4) Համայնքային կենտրոնի շենք՝ հասցեն գ. Բովաձոր, փողոց 3, շենք 6
5) Փողոցի կանգառի շինություն՝ հասցեն գ. Լեջան, փողոց 1
6) Խանութի շենք՝ հասցեն գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, շենք 3
7) Խանութի շենք՝ հասցեն գ. Լոռի Բերդ, Անդրանիկի փողոց, շենք 11
8) Փողոցի կանգառի շինություն՝ հասցեն գ. Կողես, փողոց 1
9) Վագոն-տնակ՝ հասցեն գ. Հովնանաձոր, փողոց 1/6
10) Խանութի շենք՝ հասցեն գ.Յաղդան, փողոց 1, շենք 33
11) Խանութի շենք՝ հասցեն գ.Յաղդան, փողոց 1, շենք 24
12) Համաբուժարանի շենք՝ հասցեն գ. Սվերդլով, փողոց 1, շենք 10
13) Փոստի շենք՝ հասցեն գ. Ուռուտ, փողոց 1, շենք 4
14) Ակումբի շենք՝ հասցեն գ. Ուռուտ, փողոց 1, շենք 11:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2022թ. հուլիսի 27

գ. Լոռի Բերդ